

ամենախոհման այն կլինէր ի հարկէ որ բոլոր բրիտանականները միանային ընդհանուր թշնամու անհաւատութեան դէմ կուռելու համար:

ԲԱԺԻՆ ԷՆԹԱՆՈՍԱՅ.

Ասիա. — Գերմ. բողոքականների 2ինական ներքին առաքելութիւնը 16 նահանգներում 140 կայաններ և 137 արտաքին տներ ունի որոնց մէջ 6113 հաղորդակիցներ է ժողովել, Վերջին տարին մկրտուել են 1269 հեթանոսներ: Ծառայութեան մէջ են 646 քարոզիչներ և քարոզչուհիներ և 190 թողալու որին օգնականներ: 42 եւրոպացի աշխատակորներ սեփական ծախքով են կառավարուում: Առաքելութիւնն ունի 226 գիշերօթիկ աշակերտներ և 851 երթման, 5 քարոզչական հիւանդանոցներով և 19 զեղարաններով, որ աշխատում են հիւանդների վրայ ազդել: 1896-ին հասցեւոր բարձրացաւ մինչև 877,000 մարկ:

Ամերիկա. — Աֆրիկայում այժմ հաշուում են 438 լեզուներ և 153 գաւառաբարրաւորներ, որոնցից 81-ը միայն ամբողջ ս. Գրքի կամ նրա մի քանի մասերի թարգմանութիւնն ունին: 500-ը նոյն իսկ այրբնարան չունին: Միայն Սուդանում բնակուում են 60 միլիոն հեթանոսներ, առանց մի միասնորի որ իրենց լեզուն իմանար: Այդպիսի թուերը պարզ ցոյց են տալիս ինչպէս իրաւացի կերպով նկատում է Լայպցիգի քարոզչական թերթը, որ ամերիկական և անգլիական քարոզչական շրջանների նշանաբանը՝ «Աւետարանի քարոզութիւն ամբողջ աշխարհի մէջ ներկայ սերունդի օրով», ցնորք է:

տեղէր նաև «մեծաշնորհ և տիեզերահամալու սուրբ և զերապատիւ առաքելոյն Անանիայի և սուրբ Գեորգայ» վանքը, որ 1418 թուին գրում էր իւր յիշատակարանը Մկրտիչ անունով մի սարկաւագ, որ կարծւում է թէ Նաղաշն է: * Յիշատակագիրն իւր գրած Յայտմաւորքն անուանում է «կարմեհրանց և լուսաբորոյ կտակ» և իրեն համար այսպէս է խօսում: «մեղսամած և տարտամ ոգի Մկրտիչ գրիւս, որ կոչիմ սարկաւագ, ասում է: Բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբ, զի գործով և խորհրդով ևս վատթարագոյն գտանիմ քան զամենայն որ ի ռամկաց և զարտուղի մարմնական զնացիւքս: քանզի շինուեմ զանգամ սուպխառն փորձութեանց շուրջ զմեզ մածեալ կայ, եւ ախտ մեղեարիւնք եւ հեշտութիւն մզիլ, կարիք ի մեղին, եւ անմեղութիւն մեզմ, ծուրութիւն խաւաւեցուցիլ եւ անարիւթիւն պատշաճ զինել:» Այս խօսքերն ակնարկներ են երիտասարդական հասակին յատուկ թուելութիւնների՝ «անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիւթիւն», որոնց շնորհիւ նա կարող էր սխալներ անել, ուստի խնդրում է անմեղապի լինել և տրտնջում է իւր ժամանակի վատութեան վերայ: «Ի մեծ սարկաւագս կայի, ասում է, վասն դառնութեան ժամանակիս և աւերման աշխարհիս: Բայց աւելի մեծ վիշտ է զգում ազգի ցաւերի մասին: «զազգիս մերոյ տառապանս զի կարէ պատմել, քանզի ի բազմաւալ մեղաց մեքոց փակեցաւ դուռն ողորմութեան Աստուծոյ և պատուհանք բարկութեան բացան:» Այդ էր Գառնեցի Պօղոս Բ. կաթողիկոսի ժամանակ (1418—1430 թ.), եթէ արդարեւ Գրիչ սարկաւագը Մկրտիչ Նաղաշն է, որ հաւանական է երևում աշխատունեանով յիշատակարանի մէջ յայտնած զգացմունքները, ապա ուրիշն նա իւր սկզբնական դաստիարակութիւնն և ուսումն առել է վանքի մէջ և բաւական վարժ է եղել գրոց բարբառին, ուրա կեանքի այլ հանգամանքները մեղ ծանօթ չեն. գիտներ, որ 1430 թուին Վահկացի Աստանդին եւ կաթողիկոսը Սիւ քաղաքում ձեռնադրեց նորան եպիսկոպոս: այդ ժամանակ Մկրտիչ Նաղաշ Ամիգ քաղաքի (Տիարբէքիրի) Հայոց առաջնորդ էր: ** Յայտնի է նաև այն, որ նա ծաղկելու և նկարելու արուեստ ունէր: Մեծօրայ վանքի մի ձեռագիր ժամագրքի մէջ, որ գրուած է 1432 թուին, յիշատակագիրն ասում է. *** «այլև յիշել ազաշեմ զերջանիկ և զերանաշնորհ զարեի կալիկոպոսի սեռ Մկրտիչ Ամրայ, որ երբեք չիմ գտնով եւ զանգամ երանով զարդարեաց զսուրբ զիւս առ յիշատակ բարեաց հոգւոյ իւրոյ և ի պատմաւորս օրինակի ասն աւելիակամ»: այս տեղեկութիւնից

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ՄԿՐՏԻՉ ՆԱԳԱՇ

«Զարիս, սիրոյ մի եկիւր.
Այս դիմար օրես անցի:»

Մ. Նաղ.

Մկրտիչ Նաղաշ ծնուած է Պոռ * գիւղում որ Բաղէշ քաղաքի հիւսիս արևելեան կողմն է ընկնում Ս. Ամրորդու (Ամրգորու) վանքից ոչ հեռու, այդ

* Նոսար Հայոց եւ. 55.

** Զամիան, Պատմ. Հայոց. Գ 466.

*** Յուդիկ հայ մեծ. արք. մասնաւ. Միւնիխի (Վիեննա) 12, ր.

* Այս գիւղի անունն յիշում է Յին յիշատակարաններում, որ կարելի է տեսնել Նոսար Հայոց եւ. 56 և 213, և Թառս աղբար Բ. 495.

երևում է, որ Ազմայ առաջնորդի մականունն Նաղաշ (նախաշ, նազաշ) համապատասխան է նորա ձեռքի արուեստին և նշանակում է ծաղկող, նաշխանող, նկարիչ։ Նա, ինչպես երևում է, ունեցել է իւր նրկարչութեան առանձին ոճը և իրրե հեղինակ՝ ուրիշ վանքերի էլ օրինակներ է տուել («ի պատճառս օրինակի տանս արեւելեան»)։

Նաղաշին նկարագրում են իրրե չքեղ կերպարանքի տէր, յաջողակ և «ճոռոմարան» անձն. * մի և նոյն ժամանակ նորա երգերից երևում է, որ նա զգայուն օրտի, հոգատար բնաւորութեան և առաքինի բարբի տէր մարդ է, թէպէտ միշտ համեստութեամբ ինքն իրեն մեղադրում է։ Այսպիսի անձնական բարեմասնութիւնների շնորհիւ և կարողացաւ նա փառաւորել իւր եկեղեցական ասպարէզն և պատմութեան մէջ հռչակուել իրրե գործունեայ եպիսկոպոս և եկեղեցուն հաւատարիմ՝ վարդապետ։ Հատ ծանր պայմանների մէջ էր այն ժամանակաւայ Հայոց առաջնորդութիւնը. քաղաքական վիճակն անդադար փոփոխուում էր, իրարու յաջորդում էին մէկը միւսից տարրեր իշխողներ, որոնք սակայն կամայականութեամբ էին կառավարում իրենց յանձնուած ժողովրդի գործերը. տիրապետող իշխանութիւնը քուրդ և թուրք բռնակալների ձեռքն էր. նոքա բռի և անկիրթ մարդիկ էին և միշտ քրիստոնեաների դէմ մղեաւանդութեամբ դիմուած. նոցա կամքը քաղցրացնելու և միտքը հաճելու համար մեծ քանք, հմուտութիւն և համարձակութիւն էր պէտք առաջնորդների կողմից մանաւանդ այն պատճառով, որ հայրապետական իշխանութիւնը բոլորովին թուլացած էր այն ժամանակ և եկեղեցական դասի աղղեցութիւնը մեծապէս խախտուած։ Սակայն Մկրտիչ Նաղաշի առաջնորդութեան սկզբնական ժամանակներում հանգամանքներն աւելի նպաստաւոր էին նորանով, որ Միջագետքի և յատկապէս Ամիգ քաղաքի իշխողն՝ Օթման ամիրան րարեհաճէր դէպի քրիստոնեաներն և չէր խանգարում առաջնորդին գործելու. այս մի նշանաւոր երեւոյթ է ժե. դարում, որ մահմետական երկու ակոյեան իշխանութիւններ՝ արեւելեան և արեւմտեան (սե ու սպիտակ խոյի) առժամանակ քաղցր աչքով էին նայում քրիստոնեաների վերայ։ Ինչպէս յայտնի է, ** արեւելեան կողմում Աղուպ պէկը, որ նստում էր Երևան, սիրով ընդունեց Հայոց վարդապետներին և իւր կողմից նպաստեց 1441 թուին Ղաղաբապատու ժողովի գումարմանը, Նոյնը տեսնում ենք արեւմտեքում՝ Օթմանի իշխանութեան մէջ, Այն ինչ արգելուած էր նոր եկեղեցիներ շինել և հին եկեղեցիները նորոգել, Մկրտիչ Նաղաշ հրաման առաւ Օթման ամիրայից և շինեց Ամիգ

քաղաքի եկեղեցիները, նորոգեց ու փրկեց կործանուածից նորա շրջակայքում գտնուած տաճարները, և 1433 թուին հիմնեց բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքն Արշնի բերդում * որ մինչև այժմ էլ կայ։ Այն ինչ Միջագետքում արգելուած էին քրիստոնեական պաշտամունքները, նա իւր աղղու միջամտութեամբ արգելքը վերացուց. եկեղեցականներն հարկերի տակ ճնշուած հալածուած էին, նա միջնորդեց և ազատեց նոցա այդ նեղութիւնից. Ամիգ քաղաքում քրիստոնեայ ննջեցեալների համար արգելուած էր դագաղի գործածութիւնը, նա հրաման առաւ Օթման ամիրայից քրիստոնեաներին էլ դագաղով տանելու իրենց վերջին բնակարանը. ժե. դարի վերջերում ապրող մի երգիչ՝ Յովհաննէս Թըլկուրանցին խօսում է դագաղի մասին արգէն իրրե ծանօթ, գործածական առարկայի. նա ասում է. **

«Ով որ հեծնուր ձի բարձրավիղ
Ու թուր քաշէր յամէն դեհաց,
Տեսայ զնա խիտտ փոշիման
Նրկու փայտի մէջ էր պտկած»։

Այս ամէնից զատ Մկրտիչ Նաղաշ 1439 թուին արտօնութիւն ստացաւ Օթմանի որդուց Համդայից՝ Ամիգի եկեղեցիներից մէկի վերայ կաթուղիկէ շինելու. չորս տարում կանգնեց նա այդ կաթուղիկէն, որն աւարտեց 1443 թուին. գմբէթի բարձր և ահաւոր տեսքը և նորա գեղեցիկ և արուեստաւոր յօրինուածքը գրգռեցին մոլեռանդ մահմետականների նախանձը. նոքա բողոքեցին և խնդրեցին Համդային քանդել տալ այդ նորանշան շինուածքը. Համդան չլսեց. նոքա դիմեցին իրենց աւելի բարձր գնդակտ իշխաններին, որոնք պատուէր ուղարկեցին Համդային քանդել տալ կաթուղիկէն և նորա բարձրութիւնն հաւասարել քաղաքի տների բարձրութեանը, Երբ այդ անարդար հրամանը կատարուեցաւ, Մկրտիչ Նաղաշ չկարողացաւ հանդուրժել ծանր վշտին. նա անմիջապէս հեռացաւ քաղաքից, նաե իւր վիճակից, և ինքն իրեն բանագրեց կամաւոր տարագրութեան. նա գնաց դէպի հիւսիս, հասաւ մինչև Կ. Պօլիս, որտեղ Նոյնպէս չկարողացաւ զրտնել անդորրութիւն, թէև տակաւին քրիստոնեաների ձեռքն էր այն քաղաքը. Կ. Պօլսից անցաւ նա դէպի Ղրիմ, ուր քրիստոնեայ ճէնովացուց փարթամ գաղթավայրում՝ Կաֆայ քաղաքում (Թեոդոսիա) առժամանակ մնաց իւր բարեկամ Սարգիս վարդապետի մօտ։ Մկրտիչ Նաղաշի այս ճանապարհորդութիւնից սնացած տպաւորութիւնների արդիւնքն են, անշուշտ, այն երգերը, որոնք պատկերացնում են

* Չամբ. Դ. 466.

** Թովմայ Մեծոփեցու յիշատակարանը եր. 68.

* Չամբ. Դ. 466, Թարս Աղբ. Բ. 397, 404, Եսարս Հայոց 132. վերջին գումի 1444, որ կարեղի և համարել ստատման տարին.

** Յովհաննէս Թիւրանցիին եւ իւր անդերը եր. 45.

«դարկալի» կեանքը: Ի՞նչ էր որոնում՝ նազաշխարհ տարագրութեան ժամանակ և որքան տեսնեց նորա բացակայութիւնն իւր աթոռից, յայտնի չէ. գիտենք այն, որ Համգայի մահից յետոյ նորա որդին Ջ. Հանգերի քրիստոնեաների վերայ գում ունենալով, հրաւիրակներ ուղարկեց և Մկրտիչ Նազաշին պատուով վերադարձուց զէպի իւր աթոռը և արտօնութիւն տուեց նորան վերստին շինելու Ամգայ կաթուղիկէն միայն չափաւոր բարձրութեամբ. այդ դործը կատարուեցաւ 1447 թուին օգոստոսի 6-ին: Նազաշ իւր առաջնորդութեան ժամանակ յատուկ ուշադրութիւն էր դարձնում նաև եկեղեցիների ներքին բարեկարգութեան վերայ. անձամբ պատրաստում և պատրաստել էր տալիս նոցա համար սպասներ, դարձեր, անօթներ ու զգեստներ. իւր ձեռքի այգալիսի յիշատակներից մէկը թողեց նա Վաֆայ քաղաքում Սարգիս վարդապետի մօտ այնտեղի եկեղեցու համար. նոյնպիսի մի յիշատակ, ինչպէս տեսանք, թողեց նա և Մեծոփայ վանքին:

Մի զէպը տեղի ունեցաւ Մկրտիչ Նազաշի առաջնորդութեան ժամանակ, որ կարօտ է վերաստուգութեան և լուրջ ուսումնասիրութեան. ձեռքի տակ չունենալով այն վաւերական աղբիւրները, որոնք կարող են մեզ հիմք լինել, բաւական ենք համարում առ այժմ յիշատակել միայն զէպը: Երբ Պոստանդին Ե. Վահկացին Հոռոմայ պապից հրաւեր ընդունեց Փլորենտիոյ ժողովին մասնակցելու, Երզըլմընհ սարկաւագին իւր թղթով ուղարկեց Ամիգ Նազաշ եպիսկոպոսին յայտնելու և նորա կարծիքն իմանալու: Ամգայ առաջնորդն իւր պատասխանի մէջ, որ գրեց 1436 թուին մայիսի 16-ին, խորհուրդ տուեց կաթուղիկոսին՝ այն ժամանակ միայն մասնակցելու ժողովին, երբ Հոռոմայ եկեղեցին հրաժարուի քաղկեդոնական քարոզութիւնից, եթէ այս տեղեկութիւնը ճիշդ է, նշանակում է, որ Մկրտիչ Նազաշ հակառակ էր եկեղեցիների միաբանութեան խորհրդին: Սակայն երևի այնպէս չէր մտածում կաթուղիկոսը. նա Փլորենտիայ ուղարկեց Նազաշի բարեկամին՝ Սարգիս վարդապետին, որ կաթուղիկոսի փոխանորդն էր Վաֆայում և հասաւ Փլորենտիայ այն ժամանակ, երբ ժողովն արդէն փակուել էր: *

Եւս զէպից յետոյ տեղի ունեցաւ Վաղարշապատու ժողովն 1441 թուին, ուր որոշուեցաւ հայրապետական աթոռը Սսից Վաղարշապատ տեղափոխել. Թովմայ Մեծոփեցին, որ ծանաչում էր Մկրտիչ Նազաշին և մանրամասն յիշել է ժողովին անձամբ կամ զրքով մասնակցողների անունը: ** ո-

շինչ չի յիշատակում Ամգայ առաջնորդի մասին: Այդ իրողութիւնն աչքի է ընկնում հէնց այն պատճառով, որ ինչպէս տեսանք, Մկրտիչ Նազաշ ժամանակի աղգեցիկ եկեղեցականներից մէկն էր: Այդ երևոյթն երկու տեսակ կարելի է բացատրել. կամ Մկրտիչ Նազաշ հակառակ էր Վաղարշապատու ժողովին և օրինաւոր էր համարում Սսի աթոռի գոյութիւնը և կամ քաղաքական պատճառներով անկարող էր նա մասնակցել. վերջինս աւելի հաւանական է այն պատճառով, որ Համգայ ամիրան Վաղարշապատու ժողովին նպաստող Աղուպ պէկի հակառակորդն էր. և որովհետեւ Ամգայ առաջնորդն այդ ժամանակ զբաղուած էր կաթուղիկէի շինութեամբ, որին ձեռնարկել էր Համգայի հրամանով, ուստի շատ հաւանական է, որ նա նոյն իսկ Վաղարշապատու ժողովին մասնակցելու համար ևս պարտաւորուած էր Համգայի հաւանութիւնն առնելու:

Իբրեւ ժողովրդի հովիւ Մկրտիչ Նազաշ միշտ խնամք ունէր աղքատների վերայ, հոգս էր քաշում քրիստոնեայ գերիներին ազատելու, նոցանից շատերին նոյն իսկ արծաթով գնում էր այլազգիներից, ամէն տեղ օգնութեան ձեռք էր կարկառում և ժողովրդի համար մշտապէս հոգեւոր հայր էր և վշտացեալներին մխիթարիչ, նորա այգալիսի հոգատարութիւնների համար առիթներ բնաւ չէին պակասում, որովհետեւ իշխողների մէջ հաստատապէս խաղաղութիւն չկար, բացի այդ նոքա աւելի զրգռուած էին իրար դէմ պատերազմասիրական ոգով և նոցա այդ ներքին հակառակութեան բոլոր ծանրութիւնն ընկնում էր ժողովրդի վերայ, Այսպէս 1450 թուին արևելեան բռնակալն Ջահանշահ յարձակուեցաւ արևմտեան երկրների վերայ, հասաւ մինչև Երզընկայ, այնտեղի իշխանին բռնեց և նորա հետ միասին «քառասուն անուանի ամիրայ» և «տարեալ յարեւելս կորուսին» տիրեց արևելեան ուրիշ շատ գաւառներին, և բազմաթիւ գերիներ տարաւ, այստեղից անցաւ հարաւային կողմը և նստաւ «ի վերայ Ամթայ, և ի վերայ Արղնու, և ի վերայ Մէրզինու հիկց ռարի թղտ»: * այդ հնգամեայ ծանր պաշարումն և անընդհատ կռիւներն երկու կողմերի մէջ, անշուշտ ծանրացան տեղական ժողովրդի վերայ. մի այլ յիշատակագիր Ջահանշահի այդ պաշարումները նկարագրելով ասում է, որ 1451 թուին շահը «ղխլաթայ երկիրն և զՎաղեշուն արար գերի և գեղին վայ հազար բերան, որ զայս խղճերս տեսաք աչօք մերօք ի ժամանակիս մերում»: Նոյն թուականին մի այլ գրիչ Ջահանշահի տիրապետութեան այդ օրերն համարում է «դառն ժամանակ և աւուրք չարութեան» և ասում է, որ թէև շահը «զամենայն աշխարհս ի հիւրքի կացուցանէր, բայց աւաղ որ զամենայն քրիստոնեայս դառն չարաբեր և անհան-

* Չամկան, Գ. 473—477. Մարտեան Մ. վ. պատմ. 2. Ա. ս. եկեղ. 492. Մովսիսեան Յ. վ. 2. Ա. ս. եկեղ. պատմ. 232.

** Իսպմայ Մեծոփեցու յիշատակարանը, եր. 51—53.

*** Թորոս աղլար, Բ. 380.

զիտ առնէր: Հարկապահանջութեամբ կեդեքելով զքրիստոնեայս: 1453 թուին Մշոյ և Առաքելոց վանքի յիշատակադիրընդ ըողոքն է յայտնում: ասելով, որ գրում է «ի սովալլուկ տարին: որ ոսկն պատեալ էր զամենայն մարդ ի մեծէ մինչև ի փոքր: որ չէ յիշելոց»: 1454 թուին Լիմ անապատ փախած ազատուածներէց մէկը * գրում է «զանրաւ կոծս և զսուգս և զաղիողորմ շիւան լալոցն ով կարէ պատմել և կամ ընդ գրով արկանել: և որք որ մտաք ի Լիմս: բաղում սովով և պանդխտութեամբ տառապեցաք»: Այսպէս ուրեմն նոյն հնգամեայ ժամանակում ամէն տեղ աղէտն անպակաս էր: և նոյն աղէտալի ու թշուառ վիճակին ականատես եղաւ: անշուշտ: և Ամրայ առաջնորդը: որ իւր ժողովրդի միակ հոգաբարձուն և մխիթարիչն էր այդ ժամանակ:

Մկրտիչ Նաղաշի կեանքի վերջին տարիները Միջագետքում տարածուած էր ժանտախտ: մի տարեգրութեան ** մէջ ասուած է թէ «մահ բազում անկաւ յաշխարհն ամենայն և Նաղաշ վարդապետն ասաց զողորմ: այնտեղ այդ դէպքի թուականն է ՋԺԲ 1463: սակայն ինքն Նաղաշ իւր այդ ողբի մէջ ժանտախտի ժամանակը նշանակել է ՋԺԸ = 1469 թուականով: *** երբ նա իւր աչքով տեսել է Մէրզին քաղաքի կոտորածն: և այն տպաւորութեան տակ շատ սրտառուչ կերպով պատկերացուցել է կոտորածի աղէտը: այսպէս է վերջացում նա իւր ողբը:

Ես Նախաշ եպիսկոպոս ծառայ Կուսին
Աչք տեսայ դառն կակիծ ողորմագին.
Լալով լացի և ողբացի արտասուագին,
Դառն արտասուօք զողբս ասացի նոր մեռելին.
Ի Հայոց մեծ թմկանի յինն հարկւրին
Եւ համառօտ այլ յաւելի տասն և ութին
Աչք տեսայ զողբ և զհառաչն դառնագին
ՉՄէրտին քաղաքն արար զամէն լալագին:

Նաղաշի այդ ողբն իւր ժամանակին այնքան ժողովրդականութիւն էր գտել, որ երգում էին նորատի ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակ: և յետոյ մտաւ թէ գրչեայ և թէ տպած Մաշտոցներ ի մէջ: ****

Այդ տխուր անցքից յետոյ, երեւի շատ չքաշեց և տեղի ունեցաւ Ամրայ առաջնորդի մահը ԺԵ. դարի եօթնամեակն թուականներին, Սարգիս Բ. կաթողիկոսի ժամանակ: Թէ ո՞ր ամիսի ունեցաւ նո-

րա մարմինը, մեզ յայտնի չէ. թերեւ Արդնոյ բարձրահայեց Ս. Աստուածածին վանքի կամ Ամրայ հնութիւնների նկարագրութիւնը մի օր յայտնէ բանասէրներին այդ ցանկալի շիրմի տեղն ու վիճակը: *

Կ. Կ.

(Կր շարունակուի)



* Համառօտ ուսումնասիրութիւն տրդին շարուած էր, երբ ստացանք Բաղշմուրհ Հ. Խալիկ վարդապետից մի հօտագիր յիշատակարան հետեւեալ վերաւորութեամբ. «Եիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է քաջ քաջազարմ առաքելական եպիսկոպոսն և աստուածաբան վարդապետն Տէր Աստուածասուր, քուերոյցին մեծ բարունակալին Յակոբայ Ռփանանց: Եիշատակարանն ընդօրինակուած է, ինչպէս երևում է վերջին տղերից: Հայոց 1227 և քրդի 1778 թուին: «Աւարաթ» ներկայ համարի յաւելումի մէջ յառաջ քերելով այդ յիշատակարանը, պարզ ենք համարում յիշել, որ Նաղաշի կենսագրութեան վերաբերեալ մի քանի մանրամասնութիւններ և լրացուցիչ տեղեկութիւններ կան նորա մէջ, որ մենք չենք կարող, ի հարկի, ի նկատի ունենալ: Ժամօք լինելով Աստուածասուրի յիշատակարանի բնագրին: Այսպէս՝ մենք իմանում ենք, որ Նաղաշը խմանայի ողբի է. նորա հայրը կոչւում է Տէր Առաքել, մայրը Հարիս խարուն, աւագ եղբայրը Տէր Յովնանեան, որ կանոնի վախճանել է, իսկ կրտսերը Պարոն Արզար, որ իւր ժամանակին յայտնի մեծաւուն է եղել: Իւր ծնողաց կամքով Մկրտիչը նախ քրոնացաւուն է աշխարհ մտնելու և ապա, իւր անդամակի ծնունդից յետոյ աշխարհայնով, ընտել է կրօնաւորական կոչումն: Նորա եկեղեցական վիճակը շատ ընդարձակ է եղել. Տէր Կոստանդին Ե. նորա հասակակից և արկապակաւու «ի վերայ ԴԴ. գաւազանի» քերես այս է պատճառ, որ յիշատակագիրը մի այլ տեղ ասում է թէ Մ. Նաղաշ 92 (1431) թուին «նոսի յարդս հայրապետական ի Յամիր շահասանին»:

Աստուածասուրի յիշատակարանը, որի մասին յիշում է Զամեկան (Դ. 467), զեղեցիկ յուսարանութիւն է նաղաշի կենսագրութեան: Երբ ունենալով մի այլ անգամ նորա ուսումնասիրութեան վերադառնալու, այս տեղ քաջաբար պարտականութիւն ենք համարում հրապարակել ընդհանրութիւն յայտնել Հ. Խալիկ վարդապետին, որ չղացաւ հազարդելու մեզ այս շատ հետաքրքիր հաստատութիւն:

* Նօտարք Հայոց, Կր. 166, 167, 172, 175.

** Նօտարք Հայոց, Կր. 209.

*** Սոյն բնականով է նշանակուած դէպքը Առաքել Պարթեմեզ պատմ. մէջ, Կր. 186.

**** Մայր Մաշտոց, տպագ. Կ. Պոլսո 1803.